71. ՔՈՒՐԸ ՆԱՆ ԱԽՊԵՐԸ

Իլալ ա, չիլալ մին ախպեր, մին քուր։ Ըտրանք կարում չըն իլալ ապրին։ Քուրն ասում ա. — Ա՛յ ախպեր, քյինանք ամեգյս մին տեղ կլխնես պահինք։

Ախպերն ասում ա. — Հա, քյինանք։

Տրանք քյինամ ըն։ Քուրը մնում ա մին պառավի տան, ախպերը քյինում ա, քյինում, մին տան հըսնում, ասում.— Ինձ վեր կալիք, ծեր տանը պըհեցեք։

Նահանք ասում ըն. — Լավ կինի։

Յոր ըն օնում, ուրանց քշտեն պահում։ Տրանց ինում ա էրկու խոխա։ Մարթրկնեգյ մին օր քյնամ ըն օրիշ տեղ։

Էտ տղեն ասում ըն. — Խխորցը կլղըցնիս։

Տա յեր ա օնում մին մեծ ղղղան ճուրը իփ ածում, խխոցը նստըցնում մաչին։ Խըխոցան մինը մեռնում ա, մինը մնամ ա սաղ։

Մարթրկնեգյ կյամ ըն, տեսնում էտ խխոցը իտի ըրած։ Սկսում ըն լաց ինիլը։ Վերչը հինչուվերե, էն մին խոխան լըվանում ա։

Խազայինը մին դոնում ասում ա. — Խուխեն տուս կալ տոռնը, օթ ծծի։

Տուս ա օնում տոռնը, խոխան լաց ա ինում, հարըն ասում ա. — Վեր մին էլ լաց ինի, կթխիս, սպանիս։

Ըտրա խելքը կտրում ա, հվատում ա։ Վեր մեհետ էլ ա տանում տոռնը, վեր խոխան լաց ա ինում, յոր ա օնում խուխեն մաչան էրկու կես անում, տամ շներեն։ Հարը նան մարը մին էլ ըն լաց ինում։

Ըտրանա ետը մարթըկնեգյ մսլըհաթ ըն անում, տրա քշտան քյի-
նին մին հեռու տեղ, կլոխ յոր օնին, կոռչին։ Գյուդում ըն, վեր ուրանց
կլխնեն էլ ա քյալագյ կյալու, վեր ըտրա շուրշուփը տեսնան վեչ։
Տահանք վեր մսլհաթ ըն անում, էտ տղան ըսկանում ա։

Մեհետ եր ըն կենում, թա քյինան։ Բիշի, կթնահունց ըն թխում,
վեր յոր օնեն քյինան։ Պաղրաստում ըն, տնում միշուկումը, տի-
նում տանը, վեր քյինալիս տանին։ Սա եր ա կենում, նի մնում
միշուկեն մաչը։ Էքյսը եր ըն կենում մեշոկը շիլակում, քյինում։

Հղենի մին շոն ա պտահում մարթըկնեգյ ասում ըն. — Հա՞յ
մեր տղան ըստեղ ինի հա՞։

Էտ տըղան միշուկեն մաչան ասում ա.— Ցրես էս ըմ ըստեղ։

Տահանք մնում ըն գյունաքար։ Վերչը տղան միշուկեն մաչան
տուս ա կյամ, շոնը ըսպանում։

Մարթըկնեգյ օղում ըն տրան կլոխը վարին։ Քյինամ ըն մին
ծովու ղրաղե մսլհաթ անում, վեր քշերը քցին ծովը։ Էտ տղան կլխու
յա ընգնում։ Եր ա կենում, ուրան տեղը փոխում, քյինում կնգանը
տեղը։ Քշերը մարթը կնգանը կուսիե յա տամ, քցում ծովը, գյու-
դում ա, թա։ Էն տղան ա։

Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, դե եր կաց տղան քցալ ընք ծովը։

Էն տղան ղուրթնանում ա, թա. — Էս ըմ ըստեղ։

Մարթը տեսնում ա, վեր տղան չի քցալ ծովը, սկսում ա լաց
ինիլը կնգանը դարդան։ Էտ մարթը կլոխ ա յոր օնում, էտ տղեն
քշտան, քյինում։ Էտ տղան քյինում ա մին չորանու կոշտը, չորա-
նեն խաթերը քթենում, շորերը փոխում, ուրան շորերը տամ ընդ-
րան, վրխճըրնեն էլ ինքյ օնում, կյամ ծովեն կոշտը։

Էտ մարթը կյամ ա, տեսնում, մնում կյիժված, թա. — Էտ ըշ-
տըղա՞ յըս պերալ։

Տղան ասում ա. — Ծովեն մաչան ըմ պերալ։

Աղան հարց ա տամ.— Պա ես հո՞ւնց պիրիմ։

Նա ասում ա. — Շորերըտ փոխե, թրչի մեր, ծովին մեչին վրխ-
ճըրնեն կյալու յըն իրեսը ընգնին։ Ճելլի չանիս տուս կյաս, կքյինաս
տական էլ կպիրիս, ընդեղ էնա ամմեն կենթանուց լիգյը, վախիս վեչ
հա՞, կքյինաս։

Աղան շորերը փոխում ա, մին ղրեռ մհակ յոր օնում, վեր նի
մրննի ծովեն մաչը, ծովեն կոխկեն մին խիլլա նստում ա, մտածում.
«էս ըշտղա՞ յա պերալ, էս շան տըղան, բա ծովեն մաչին վեչխար
կինի՞»։ Մին էլ նորու մտածում ա, թա ըշտղա՞ յա պերալ, պա էս-
քան վրխճըրնեն ստրան հո՞ւ տվավ, վեր ըրալ ա առաչը։ Աստուծ

ըսելավ, փառքյ տեր աստված ըսելավ օզըմ ա նի մըննի ծովը, մինը կյամ ա կոշտը։

Տա ՛հրցընում ա, ասում.—Ա՛ մարթ, խստի պեն, ծովեն տակեն վեխճար կինի՞։

Տա ասում ա. — Հա, լոխ վըխճըրնեն ընդեղան ընք պուլրում։

Վեր խտի յա ասում, տա մհակը յոր ա օնում, ընգյնում ծովեն մաշըլ։ Ծովեն մաշին մին մեծ փեդ ա ընըմ, փադը նի յա մըննում փորը, մեռնում ա։